

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021թ. ընթացքում ևս Արմավիրի մարզը շարունակել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ Արմավիրի մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

2021թ. տարաբնույթ համագործակցություն է իրականացվել՝

ՌԴ վարչատարածքային միավորների հետ. նամակագրության միջոցով քննարկվել է ՌԴ Կեմերովոյի-Կուզբասի նահանգի և մարզի միջև համագործակցության հնարավորության հարցը: Մարզի Արմավիր, Էջմիածին և Մեծամոր համայնքների ղեկավարների հետ քննարկվել է ՌԴ Իրկուտսկի մարզի Բրատսկ քաղաքի և միջև գործընկերային կապեր հաստատելու և քույր քաղաքներ հռչակելու առաջարկը և մարզի Արմավիր և Մեծամոր համայնքների ղեկավարները պատրաստակամություն են հայտնել համագործակցություն սկսելու հարցում: 2021թ. հոկտեմբերի 18-ից 19-ը Երևանում կայացած «Նոր իրողությունների պարագայում ռուս-հայկական համագործակցության հեռանկարներ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային ութերորդ համաժողովին մասնակցելու նպատակով կազմվել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել համաժողովին մասնակիցների կազմը և հայ-ռուսական համագործակցության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը: Համապատասխան ձևաչափով մարզի ներկայացուցիչները մասնակցել են համաժողովի երկօրյա աշխատանքներին:

Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի մարզի Արզամաս քաղաքի հետ.

2021թ. հոկտեմբերի 7-ին Էջմիածին քաղաքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի Էջմիածին և Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդի մարզի Արզամաս քաղաքների միջև բարեկամական կապեր հաստատելու մասին համաձայնագիր:

Համաձայնագրի ստորագրման համար հիմք է հանդիսացել երկու քաղաքների մասնավոր ձեռնարկությունների միջև առկա համագործակցությունը և այն զարգացնելու հնարավորությունը: Համաձայնագիրը ստորագրվել է Նիժնի Նովգորոդի պատվիրակության՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում, Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանի և Արզամասի քաղաքապետ Ալեքսանդր Շյոլոկովի կողմից:

Համաձայնագրով կողմերը համագործակցության ուղիներ կստեղծեն մշակութային, առևտրային, տնտեսական եւ գիտատեխնիկական ոլորտներում: Կնպաստեն երկու քաղաքների տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև անմիջական կապերի հաստատմանը, Էջմիածին և Արզամաս քաղաքների ձեռնարկությունների վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված համատեղ ներդրումային ծրագրերի իրականացմանը, երկու քաղաքների կրթական կազմակերպությունների միջև փոխգործակցության ու մշակութային ու սպորտային կապերի հաստատմանը և զարգացմանը:

Բելառուսի Հանրապետության հետ. 17.03.2021թ. ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել «Արմավիրի մարզում բրդի վերամշակման արտադրամասի հիմնում» ներդրումային ծրագիր-առաջարկը (հայերեն, ռուսերեն)՝ տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 14-րդ նիստի արձանագրության 5.6 կետի պահանջի համաձայն: Արմավիր և Մեծամոր համայնքները պատրաստակամություն են հայտնել՝ Բելառուսի Հանրապետության որևէ համայնքի հետ համագործակցելու, բարեկամության և փոխընթերցման հուշագրեր ստորագրելու ուղղությամբ:

ԻԻՀ հետ. ՀՀ և ԻԻՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 16-րդ նիստի փոխընթերցման հուշագրի կետերի կատարման ուղղությամբ ստացվել է առաջարկ ԻԻՀ Քերման և մարզի Արմավիր քաղաքի միջև համագործակցություն սկսելու վերաբերյալ, 24.05.2021թ-ին ՏԿԵՆ են ներկայացվել մարզի Արմավիր և Քերման քաղաքների միջև կնքվող համագործակցության հուշագրի նախագծի անգլերեն և հայերեն օրինակները: Արմավիր համայնքի ղեկավարը հայտնել է իր պատրաստակամությունը 2021թ. սեպտեմբերի 4-ից 8-ը երեք անձից բաղկացած պատվիրակությամբ այցելելու Քերման քաղաք՝ հետագա համագործակցության հարցերը քննարկելու նպատակով, սակայն այցը հետաձգվել է:

Վրաստանի վարչատարածքային միավորների հետ. քննարկվել է մարզի քաղաքների և Վրաստանի որևէ քաղաքի միջև համագործակցության հնարավորությունը, Արմավիր քաղաքը պատրաստակամություն է հայտնել բարեկամական կապեր հաստատելու Վրաստանի Կվարելի համայնքի հետ տուրիզմի և զինեգործության ոլորտում, մարզի Փարաքար համայնքը՝ Վրաստանի Կախեթիի շրջանի որևէ համայնքի հետ խաղողագործության և ջերմոցային տնտեսության ոլորտում, Պտղունք համայնքը՝ Մառնեուլիի շրջանի Դամիա համայնքի, Սարդարապատ համայնքը՝ Շեկվեթելի համայնքի, Աղավնատուն համայնքը՝ Ախալցխայի շրջանի Փոքր Պամաճ համայնքի, Շահումյան թ/Ֆ համայնքը՝ Կախեթիի շրջանի որևէ համայնքի, Տանձուտ համայնքը՝ Մառնեուլիի շրջանի Միրզոնկա համայնքի, իսկ մարզի ք.Մեծամոր, Հացիկ, Նորավան, Շահումյան, Արտամետ, Տավլորիկ համայնքները ցանկություն են հայտնել համագործակցելու Վրաստանի որևէ համայնքի հետ՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Չեխիայի Հանրապետության վարչատարածքային միավորների հետ. Մարզի Էջմիածին և Մեծամոր համայնքներին տրամադրվել է չեխական «BKP Group» և «Vyntahy» ընկերությունների արձագանքները և առաջարկվել նշված ընկերությունների հետ համագործակցության շուրջ քննարկումներն առավել առարկայական դարձնելու համար ներկայացնել հստակ բովանդակային տեսքով առաջարկներ, սակայն համագործակցության շուրջ հստակ առաջարկներ չեն ներկայացվել: ՀՀ Արմավիրի մարզպետի և Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյանի մարզպետ Իվո Վոնդրակի միջև 2021թ. ընթացքում նամակագրությունը շարունակվել է:

Ղազախստանի հետ. ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկվել է ՀՀ մարզերի և ղազախական ակիմաթների միջև համագործակցության հնարավորությունը և արժանացել հավանության, պատրաստակամություն է հայտնվել բարեկամական կապեր հաստատելու Ալմաթիի ակիմաթի հետ՝ սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, զբոսաշրջության ոլորտներում, ինչպես նաև հաստատվել է մարզպետի մասնակցությունը Ղազախստանի Հանրապետության վարչատարածքային միավորների ղեկավարների հետ հեռավար ձևաչափով անցկացվող հանդիպմանը:

Բաշկորտոստանի Հանրապետության հետ. ՀՀ Արմավիրի մարզի և Բաշկորտոստանի Հանրապետության միջև բարեկամական հարաբերություններ սկսելու և զարգացնելու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ ՏԿԵՆ՝ դիվանագիտական կապուղիներով շահագրգիռ կողմին փոխանցելու համար:

Ուկրաինայի վարչատարածքային միավորների հետ. մարզի Էջմիածին համայնքը համագործակցում է Բելգորոդ-Դնեստրովսկի, Պոլտավայի հետ 2021թ. նոր համագործակցության հուշագիր է կնքվել Չերկասի համայնքի հետ:

Իսպանիայի Բենալմադենա (Անդալուսիա) վարչատարածքային միավորի հետ. 2021 թվականի հոկտեմբերի 28-ին Իսպանիայի Բենալմադենայի (Անդալուսիա) քաղաքային խորհուրդը լիազուրկ նիստի ընթացքում միաձայն հավանություն է տվել ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին և Բենալմադենա (Անդալուսիա) քաղաքները քույր քաղաքներ հռչակելու գործընթացին: Համայնքը պատրաստակամություն է հայտնել հյուրընկալել Բենալմադենայի պատվիրակությանը Էջմիածին քաղաքում:

ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել 2021 թվականի հուլիսի 27-28-ը Երևանում կայացած հայ-դրղական միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստի օրակարգը ձևավորելու և արձանագրության մեջ ներառելու առաջարկություն (ռուսերեն):

Նիդերլանդների վարչատարածքային միավորների հետ. Ալմելո-Էջմիածին համագործակցության շրջանակներում իրականացվել են օնլայն հանդիպումներ և քննարկումներ: 24.12.2021թ-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացվել է գրություն՝ Արմավիրի մարզպետի հետ Հայաստանում Նիդերլանդների արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլաս Յակոբ Սխերմերսի հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերելու մասին: Մարզպետի կողմից ընդունվել է Հայաստանում Նիդերլանդների արտակարգ և լիազոր դեսպանի հետ հանդիպման առաջարկը:

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ իրականացվող աշխատանք. ներկայացվել է մարզի 8 սահմանամերձ համայնքների վերականգնման կամ կառուցման ենթակա ենթակառուցվածքների, գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ պահանջվող ձևաչափով: Մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար գրասենյակի ներկայացրած՝ սահմանամերձ համայնքներում վերականգնման ենթակա ենթակառուցվածքների, գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների վերաբերյալ հարթակի նախնական տարբերակը, որի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ, իսկ առցանց հանդիպում-քննարկմանը մասնակցելու նպատակով մարզպետարանի երեք թեկնածուներ: Մարզպետարանում քննարկվել է ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրի՝ ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակին վերաբերող միջոցառումների ցանկը: 2021թ. ընթացքում ներկայացվել է նաև սփյուռքահայերի և սփյուռքի կառույցների հետ համագործակցությամբ իրականացված ծրագրերի և միջոցառումների, Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների, սփյուռքահայերի հետ հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների մասին տեղեկատվություն:

Չարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին